**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**15 հունվարի 2026թ-ին կնքված N «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/7-2» ծածկագրով՝**
**Պետության կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պետական գնման**
**պայմանագրի**

ք.Երևան «03» 02 2026թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արամ Ստեփանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, ինչպես նաև «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/7-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

***1. Համաձայնագրի առարկան***

1.1 Հաշվի առնելով, որ 2026 թվականի համար հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցի՝ հավելված 1-ի և Վճարման ժամանակացույցի՝ հավելված 2-ի:

***2. Այլ պայմաններ***

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

***3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1 | Ք.Երևան, Արաբկիր 19փ. 4շ. 5 բն |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Կոնվերսբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011022085 | ՀՀ 1930046287910О |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 00180633 |
| ------------------------ / ստորագրություն / | ------------------------ / ստորագրություն / |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*«15» հունվարի 2026թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/7-2 ծածկագրով պայմանագրի*
*« 03 » 02 2026թ. կնքված N 1 Համաձայնագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 2 | 50311120/513 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ՝ համաձայն կից ներկայացված բնութագրի /Պայմանագրի հավելված 1.1-ի/ | դրամ | 1 600 000 | 1 | Ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 1 | Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026թ. դեկտեմբերի 25-ը |

*Ծանոթություն

1. Ծառայությունների գները ներառում են դրա ընթացքում օգտագործվող բոլոր նյութերի ու պահեստամասերի գները:
2. Պահեստամասերը պետք է տրամադրվեն Կատարողի կողմից և լինեն չօգտագործված:
3. Ծառայությունների մատուցման ժամանակ փոխարինված պահեստամասերի կամ այլ սարքավորումների համար երաշխիքային ժամկետը սահմանվում է՝ Ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 180 օրացուցային օրը:
4. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցելու օրվա և ժամի մասին:
5. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի սարքը կամ սարքավորումը Կատարողի սպասարկման կետում գրանցվելու օրվանից 5 օրյա ժամկետում:
6. Պատվիրատուի պահանջով, հարկ եղած դեպքում, ծառայությունները պետք է մատուցվեն նաև տեղում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում):
7. Կատարողի մոտ պահեստամասի բացակայության պատճառով, ծառայության մատուցման ժամկետն ավելացնելու դեպքում, Պատվիրատուի համաձայնությամբ, կարող է սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետ, անհրաժեշտության դեպքում Կատարողի կողմից Պատվիրատուին ժամանակավոր օգտագործման աշխատող այլ համանուն սարքեր, սարքավորումներ տրամադրելու պայմանով:
8. Եթե Պատվիրատուին հայտնի չէ սարքի կամ սարքավորման անսարքության պատճառը, ապա Կատարողը իրականացնում է դիագնոստիկա և եզրակացություն է տրամադրում Պատվիրատուին, որից հետո Պատվիրատուն, ելնելով նպատակահարմարությունից, իր հայեցողությամբ, դադարեցնում կամ հանձնարարում է կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված, իր կողմից մատնանշված ծառայության մատուցումը:
9. Ծառայությունները մատուցվում են Պատվիրատուի կողմից պահանջի ծագման դեպքում:
10. Պատվիրատուն վճարում է փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

**Համակարգչային սարքերի վերանորոգման ծառայությունների միավոր գները հաշվարկված են սույն Պայմանագրի 4.3 կետով սահմանված բանաձևի համաձայն և ներկայացված են Պայմանագրի հավելված N 1.1 -ում:**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

-----------------------------------
/ ստորագրություն /
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Հպարտ քաղաքացի» ՍՊԸ
Ք.Երևան, Արաբկիր 19փ. 4շ. 5 բն

Կոնվերսբանկ ՓԲԸ
ՀՀ 19300462879100
ՀՎՀՀ 00180633

-----------------------------------
/ ստորագրություն /
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*«15» հունվարի 2026թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/7-2 ծածկագրով պայմանագրի*
*« 03 » 02 2026թ. կնքված N 1 Համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը |
| 2f | 50311120/513 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | - | 400 000 | 400 000 | 800000 | 800000 | 800000 | 1 200 000 | 1 200 000 | 1 200 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 | 1 600 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
** Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

-----------------------------------
/ ստորագրություն /
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հպարտ քաղաքացի» ՍՊԸ
Ք.Երևան, Արաբկիր 19փ. 4շ. 5 բն

Կոնվերսբանկ ՓԲԸ
ՀՀ 19300462879100
ՀՎՀՀ 00180633

-----------------------------------
/ ստորագրություն /
Կ.Տ